

ՔՈՎԻՏԸ ՏԱԿԱԻՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹԻՒՆ

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը որոշեց Քովիտի համաճարակը պահել գերագոյն արտակարգ իրավիճակի տակ, առ ի գործադրություն մասնագետներու յանձնաժողովի առաջարկին, ըստ որուն՝ տակաւին կանուխ Է մեղմելու արտակարգ դրութիւնը: Նշենք, որ Քովիտը առողջապահական մտավախութիւն համարուեցաւ երեք տարի առաջ գրեթէ այս օրերուն:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԴՈՒՄԻ ՄՏԱԴՐՈՒԹԻՒՆ

Աշխատանքային ընդհանուր համադաշնակցութեան Նախագահ Պըշարա Ամար յայտարարեց, թէ իրենց



մտադրութիւն ունին ամբողջական գործադրող յայտարարելու Չորեքշաբթի, 8 Փետրուարին, պահանջելով աշխատանքներու ընկերային ու տնտեսական խնդիրներու լուծում: Իսկ Ցամաքային փոխադրութեան համադաշնակցութիւններու միութեան Նախագահ Պասսամ Թէյս յայտնեց, որ հանրային փոխադրութեան վարորդներուն վիճակը դարձած է անտանելի:

Պէյրուզի եւ Լեռնալիբանանի մէջ հացի փուռերու սեփականատէրերու սենտիքայի Նախագահ Նասեր Սրուր իր կարգին յայտնեց, որ հացին գինը պիտի նուազի երբ



Կեդրոնական դրամատունէն հրապարակուին անհրաժեշտ շրջաբերականները եւ նուազի ամերիկեան տոլարին փոխարժեքը: Սրուր Նաեւ անչակից մարմիններէն պահանջեց լուծել փուռերուն վաճառուող ցորենի անբաւարարութեան հարցը, որպէսզի կարելի ըլլայ անխափան շարունակել հացի արտադրութիւնը:

ՂԱՏԱՌՆԵՐՈՒ ԱՌՃԱԿԱՏՈՒՄ

Վճռաբեկ ատենի ընդհանուր դատախազ Ղասսան Օուէյտաթ երէկ յուշագիր յղեց Ելեւմտական հարցերու ընդհանուր դատախազ Ալի Իպրահիմին՝ պահանջելով բանակի հետախուզական ծառայութեան եւ ապահովական կառոյցներուն միջոցաւ հետապնդել ու ձերբակալել այն լուսնայափոխները, որոնք մասնակից կը դառնան լիբանանեան լիբանի արժեզրկումին:

Ղատական իշխանութիւններ տեղեկութիւններ երէկ նշեցին, որ արդարադատութեան Նախարարի պաշտօնակատար Յաննի Յըլու կը փորձէ հանդարտեցնել դատաւորներ Օուէյտաթի եւ Թարեք Պիթարի միջեւ սրած լարուածութիւնը, մանաւանդ որ իրավիճակը ազդած է դատական համակարգի աշխատակիցներուն եւ դատաւորներուն վրայ, որոնք սկսած են զօրակցիլ առճակատող կողմերէն մէկուն՝ միւսին դէմ: Ըստ տեղեկութիւններուն, կ'առաջարկուի Պիթարի գրասենեակը Պէյրութէն փոխադրել Ժուլիտի Արդարադատութեան պալատ, սակայն գայն գործադրելու համար ցարդ չէ գտնուած օրինական միջոց:

Իր կարգին, Ելեւմտեան Նախկին Նախարար, երեսփոխան Ալի Ղասսան Խալիլ բողոք ներկայացուցած է դատաւոր Թարեք Պիթարի մասին, անոր աշխատանքային ենթադրեալ սխալներուն համար:

ԱՐՑԱՆ. ՀԱՅԱԹԱՓՈՒՄԵՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՄԻԱԿ ՄԻՋՈՑ

Արցախի պետական Նախարար Ռուբէն Վարդանեան Ստեփանակերտի մէջ տեսակցութիւններ ունեցաւ քաղաքայիններուն հետ եւ քննարկեց Արցախի մէջ տիրող իրավիճակը եւ կառավարութեան աշխատանքները: Վարդանեան շեշտեց, որ Ատրպէյճանի՝ Արցախը հայաթափելու



ծրագիրը ձխողութեան մատնելու համար կայ միայն մէկ ճանապարհ՝ սեղմել ակռաները եւ յառաջ երթալ: Ըստ Վարդանեանի, այդ կարելի է կատարել միայն համախմբուած մտայնութիւնով: Իսկ քաղաքայինները հաւաստիացուցին, որ շրջափակումը չի կրնար կտրուել հայրենի հողին վրայ արժանապատիւ կեանքը շարունակելու վճռակամութիւնը: Կառավարութիւնը յայտարարեց, որ Արցախի շրջափակումի սկիզբէն ի վեր Յանրապետութեան մէջ ծնած է 183 երեխայ:

Հայաստանի Ազգային ժողովի փոխնախագահ Ռուբէն Ռուբինեան յայտնեց, որ միջանցքի փակումին վերաբերեալ միջազգային ճնշումը եւ ուշադրութիւնը կ'ընդար-



ձակուի եւ պետք է շարունակել այդ աշխատանքը: «Ազատութեան» հետ զրոյցի ընթացքին Ռուբինեան յիշեցուց, որ 2020-ի Նոյեմբեր 9-ի յայտարարութիւնը յստակ կը նշէ, որ միջանցքը կը մնայ ռուս խաղաղապահ զօրակազմի վերահսկողութեան տակ եւ այնտեղ Արցախի կամ Հայաստանի իշխանութիւնները չունին լիազօրութիւն կամ վերահսկողութիւն: «Հայաստանը Արցախի մէջ չունի զօրք եւ զէնք ու ականներ չէ տեղափոխած», ըսաւ Ռուբինեան, հակադարձելով ատրպէյճանական այն պնդումներուն, որ հայերը միջանցքը գործածած են ականներ փոխադրելու Արցախ եւ գանոնք գործածելու ատրպէյճանական թիրախներու դէմ:

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ընկերային հաղորդակցութեան Թելեկրամ կիրառութեան Peacekeeper ալիքը հաղորդեց, որ ատրպէյճանա-

կան կողմին հետ համաձայնութեամբ, ռուս խաղաղապահները Արցախէն Հայաստան փոխադրած են այն ռուս քաղաքայինները, որոնք Ամանորին ժամանած էին Ար-



ցախ: Ընդհանուր առմամբ փոխադրուած է 44 մարդ՝ ներառեալ 7 երեխայ: Իսկ Կարմիր խաչի միջազգային կոմիտէի ներկայացուցիչները Յունուարին դարձեալ այցելած են Ատրպէյճանի մէջ պահուող հայ գերիներուն՝ փոխանցելով իրենց ըստանիքներուն Նամակները եւ ձայնագրուած տեսանիւթերը: Կարմիր խաչը երէկ Արցախէն Հայաստան փոխադրեց 19 քաղաքային՝ ըստանիքի հետ վերամիաւորուելու նպատակով:

Երէկ Արցախի մէջ վերջապէս իրենց հարազատներուն վերամիացան այն երեխաները, որոնք Վրաստանի մէջ մասնակցած էին մրցոյթի, սակայն չէին կրցած տուն վերադառնալ՝ միջանցքի փակումին պատճառով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋԱՍՏՈՒԹԵԱՆ ՊԱՅԱՆՁ

Միջազգային իրաւական հարցերով Հայաստանի ներկայացուցիչ Եղիշէ Կիրակոսեան յայտնեց, որ ՄԱԿ-ը Արցախի հայերուն համար վերջին ատենան է: Միջազգային դատարանի նիստին ընթացքին Կիրակոսեան յայտնեց,



որ «Հայաստան կը պահանջէ որ դատարանը ատրպէյճանին պարտաւորեցնէ դադրեցնել միջանցքի շրջափակումը երկու ուղղութիւններով, ինչպէս նաեւ չիստանալ Հայաստանէն Արցախ կազմաւտակարարումն ու լեյկտարմատակարարումը»: Իսկ Հայաստանի հայցը ներկայացնող փաստաբաններէն Լորընս Մարթին յայտնեց, որ առանց միջազգային դատարանի անյապաղ գործողութիւններուն Արցախի հայերուն կեանքը վտանգուած է:

ԲԵՌՆԱԿԱՌԵՐՈՒ ԴԵՍ ՀԱՐՈՒԱԾ ԱԼՊՈՒՔԱՄԱԼԻ ՄԵՋ

Մարդկային իրաւունքներու սուրիական դիտարանը հաղորդեց, որ անօդաչու թռչող սարքեր Սուրիոյ արեւել-



եան սահմանային Ալպուրամալ շրջանին մէջ մբակոծած են բեռակառքեր, որոնք ենթադրաբար Իրանէն զէնք կը փոխադրեն Իրաքի վրայով: Ըստ դիտարանին, հարուածին պատճառով մահացած են 7 վարորդներ ու իրենց ընկերակիցները, որոնք սուրիացի չեն:

ՉԳՈՒՆԱՑՈՒՄ ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐՈՒՆ

Անգարայի մէջ ամերիկեան դեսպանութիւնը Թուրքիա այցելող ամերիկացի քաղաքայինները զգուշացուց Իսթանպուլի մէջ ահաբեկչական հաւանական գործողութիւններու վտանգէն: Հաղորդագրութիւնը դիտել տուաւ, որ ամերիկացիները Պոլսոյ որոշ շրջաններու մէջ կրնան թիրախ դառնալ յարձակումներու՝ որպէս հակադարձութիւն Եւրոպայի մէջ Զորանի հրկիզումին, մասնաւորաբար ընդգծելով Պէյժոլու, Կալաթա, Թաքսիմ շրջանները եւ Իսթիքլալ պողոտան, որոնք բոլորն ալ կը համարուին զբօսաշրջային կեդրոններ: Նման զգուշացում հրապարակած էր նաեւ Ֆրանսական դեսպանութիւնը:



Իսկ Արցախի մարդկային իրաւունքներու պաշտպան Գեղամ Ստեփանեան, իրաւապաշտպան Արման Թաթոյեանի հետ աւելի քան 45 երկիրներու ներկայացուցիչներու առջեւ բացայայտեց ատրպէյճանական թշնամանքի փաստերը՝ Զարիթասի միջազգային ու եւրոպական կառոյցներու կազմակերպած առցանց հանդիպումին ընթացքին:

ՄԱԿ-Ի ԴԱՏԱՐԱՆԻՆ ՄԷՋ ԵՂԻՇԷ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅ շԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԱՆԿԵԱԼ ԴԱՅԱՆՋՆԵՐԸ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՆԿԱՏԱՄԱՐ

ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանին մեջ Հայաստանի ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսեանը ներկայացուց Հայաստանի միջանկեպալ պահանջները



Ատրպեյճանի նկատմամբ: Յեղապաշտական խտրականության վերացման կոմիտեի վարոյթի ծիրին մեջ Ատրպեյճանի դեմ Հայաստանի ներկայացուցած հայցի լուսմներուն ժամանակ Եղիշե Կիրակոսեանը նշեց, որ Հայաստան կը խնդրէ դատարանէն պարտադրել հետեւեալ միջանկեպալ միջոցները՝ նախքան այս գործով վճիռ կայացնելը:

«Ատրպեյճանը պետք է դադարեցնէ իր կազմակերպումն ու օժանդակութիւնը, այսպէս կոչուած, բողոքներու ցոյցերուն, որոնք կը խաթարեն ազատ տեղաշարժը Լաչինի միջանցքով՝ երկու ուղղութեամբ: Ատրպեյճանը պետք է երաշխաւորէ Լաչինի միջանցքով բոլոր անձերու, բեռներու եւ փոխադրութեան միջոցներու անխափան տեղաշարժը՝ երկու ուղղութեամբ:

Ատրպեյճանը անմիջապէս պետք է լիովին վերականգնէ եւ ձեռնպահ մնայ խաթարելէ կամ խանգարելէ բնական կազմի կամ այլ հանրային ծառայութիւններու մատակարարումը Լեռնային Ղարաբաղ», ըսաւ Կիրակոսեան:

ՔԱԹԱՐ ԿԱՏԱՐԱՆԸ ԱՇԽԱՏԱԿԱԿՎՄԱՆ ԱՅՅԻ ԾԻՐԻՆ ՄԷՋ ԱՐԱՅԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՀԱՆԳԻՊՈՒՄԸ Է ԷՄԻՐԻ ԳԻՒՄՆԻ ԴԵԿՎԱԿԱՐԻՆ ՀԵՏ

Աշխատանքային այցով Զաթարի մայրաքաղաք Տոհա-յի մեջ գտնուող վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Յարութիւնեան հանդիպած է Էմիրի դիւանի ղեկավար Շէյխ Սաուտ Պըն Ապտըլռահման Ալ Թանիի հետ:

Քննարկուած են վարչապետ Փաշինեանի՝ 2022 թուականի Յունիսիսի Զաթար կատարած այցի ծիրին մեջ ստորագրուած փաստաթուղթերու եւ ձեռք բերուած պայմանաւորութիւններու իրականացման ընթացքին, յառաջիկային հնարաւոր փոխայցերու կազմակերպման հետ կապուած հարցեր:



Միտքեր փոխանակուած են վարչապետի աշխատակազմին եւ Էմիրի դիւանին, ինչպէս նաեւ՝ Հայաստանի ու Զաթարի պետական կառավարման այլ մարմիններու միջեւ արդիւնաւետ փոխգործակցութեան մեխանիզմներու շուրջ:

Արայիկ Յարութիւնեանը այցելած է «Ալ Շազիրա» հեռուստաընկերութիւն: Քննարկուած են տարածաշրջանային եւ ներհայաստանեան թեմաներու լուսաբանման հետ կապուած հարցեր:

Կարճատեւ այցի ընթացքին վարչապետի աշխատակազմի ղեկավարը եղած է նաեւ Զաթարի ազգային գրադարանին եւ Իսլամական արուեստի թանգարանին մեջ՝ ծանօթացած է գրադարանին մէջ առկա ֆոնտին եւ թանգարանի ցուցանմուշներուն:

ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏՅԻՆԵՐԸ ՆՇԱԾ ԵՆ, ՈՐ ՈՐԵՒԷ ՀՐԶԱԾԱԿՈՒՄ ԶԻ ԿՐՆԱՐ ԿՈՏՐԵԼ ՇԱՅՐԵՆԻ ՀՈՂԻՆ ՎՐԱՅ ԱՊՐԵԼՈՒ ԻՐԵՆՅ՝ ՀԱՍՏԱՏԱԿԱՄՈՒԹԻՒՆԸ

Արցախի Հանրապետության պետական նախարար, շտաբի պետ Ռուբեն Վարդանեան Ստեփանակերտի տարբեր թաղամասերու մէջ հանդիպումներ ունեցած է բնակչութեան հետ:

Ինչպէս անցեալ շաբթուան ընթացքին՝ համայնքներուն մէջ, այնպէս ալ Ստեփանակերտի մէջ հանրային հանդիպումներու ընթացքին Ռուբեն Վարդանեանը խօսած է այն մարտահրաւերներուն եւ խնդիրներուն մասին, որոնք պետութիւնն ու հասարակութիւնը կ'առերեսուին ատրպեյճանական շրջափակման պատճառով:



Պետական նախարարը ներկայացուցած է շտաբին կողմէ ճգնաժամային իրավիճակին մէջ բնակչութեան կենսագործունեութեան ապահովման, հրատապ խնդիրներու լուծման, ճգնաժամի հետեւանքներու մեղմացման, ինչպէս նաեւ՝ ապաշրջափակման ուղղութեամբ տարբեր ոլորտներու եւ ասպարեզներու մէջ կատարուող աշխատանքները: Ան կարելի է համարած է այս բարդ ժամանակաշրջանին մէջ ժողովուրդին հետ յետադարձ կապի պահպանումը, ամբողջական տեղեկատուութեան փոխանցումը, ինչ որ հանրութեան պիտի օգնէ ւաւելի լաւ հասկնալու իրավիճակը ու համատեղ ջանքերով յաղթահարելու գայլ:

«Եթէ մենք կ'ուզենք, որ Ատրպեյճանը Արցախը հայաթափելու իր ծրագիրներուն մէջ չյաջողի, մենք ունինք մէկ ճանապարհ՝ սեղմել ատամներն ու յառաջ երթալ: Ու այդ կրնանք ընել միայն համախմբուելու միջոցով», ըսած է Ռուբեն Վարդանեանը:

Պետական նախարարը լսած է ստեղծուած իրավիճակին, ինչպէս նաեւ շտաբին կողմէ իրականացուող աշխատանքներուն վերաբերեալ բնակչութեան կարծիքներն ու մտեցումները, պատասխանած է անոնց հետաքրքրող հարցումներուն:

Ինչպէս համայնքներուն, այնպէս ալ Ստեփանակերտի մէջ հանդիպումներու մասնակիցները վստահեցուցած են, որ որեւէ շրջափակում չի կրնար կոտորել հայրենի հողին վրայ իրենց արժանապատիւ կեանքը շարունակելու հաստատակամութիւնը:

ԹՈՒՐԷՐՈՅ ՄԷՋ ԱՄՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԸ ԶԳՈՒՇԱՅՈՒՅՄԸ Է ՄԹԱՄՊՈՒԼԻ ԿԵԳՐՈՒՄԻՆ ՄԷՋ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՎՔԲԵԿՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՎՃԱՆՔԻՆ ՄԱՍԻՆ

Թուրքիոյ մէջ ԱՄՆ դեսպանատունը իր քաղաքացիները զգուշացուցած է Սթամպուլի կեդրոնին մէջ ահաբեկչական հնարաւոր յարձակումներու վտանգին մասին:

Այս մասին դեսպանատունը հաղորդագրութիւն տարածած է:



«Դեսպանատան տուեալներով՝ եկեղեցիները, դիւանագիտական ներկայացուցչութիւնները եւ այլ վայրեր, ուր կը յաճախեն արեւմտեան երկիրներու քաղաքացիները, կրնան դառնալ ահաբեկչական յարձակումներու առարկա: Յարձակումներու վտանգը յատկապէս կը վերաբերի այնպիսի վայրերուն, ինչպիսիք են Պեյօղլու թաղամասը, Այալթա պատմական թաղամասը, Իսթիքլալ փողոցը եւ Թաքսիմ հրապարակը: ԱՄՆ դեսպանատունը իր քաղաքացիներուն խորհուրդ կու տայ գերծ մալ նման վայրեր այցելել, խուսափիլ փողոցներուն մէջ կուտակումներ եւ հետեւիլ տեղական լրատուամիջոցներու հաղորդագրութիւններուն եւ դիւանագիտական առաքելութեան կայք-տեղեկատուութեան», կը նշուի դեսպանատան տարածած հաղորդագրութեան մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱՔԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՓԱՍՏԱԳԱՆԸ ՄԱԿ-Ի ԴԱՏԱՐԱՆԻՆ ՄԷՋ ՓԱՍՏԱԳՐԿՈՒՄԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԱԾ Է ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԻՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հայաստանի հայրը ներկայացնող փաստաբաններէն Լորընս Մարթինը ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանին մէջ ներկայացուց Ատրպեյճանի կողմէ Լեռնային Ղարաբաղի շրջափակման հիմնական նպատակները եւ այն բնաբանը, որով շրջափակումը տեղի կ'ունենայ, մարդասիրական ծանրագոյն հետեւանքները, որոնք կ'առաջանան Ատրպեյճանի գործողութիւններուն պատճառով, ինչպէս նաեւ հիմնաւորեց, թէ ինչո՞ւ Ատրպեյճանի արդարացումներէն ոչ մէկը վստահութեան արժանի է:



«Եկած ենք խնդրելու, որպէսզի հրատապ միջամտե՛ք վերջ տալով շարունակուող մարդասիրական աղէտին: Նախորդ տարուան 12 Դեկտեմբերէն ի վեր Լեռնային Ղարաբաղի բնակչութիւնը գրեթէ ամբողջութեամբ կտրուած է արտաքին աշխարհէն: Անոնք կը շարունակեն զրկուած մնալ սննդամթերքէն, դեղորայքի հասանելիութենէն եւ կեանքի համար անհրաժեշտ այլ պարագաներու հասանելիութենէն: Եթէ դատարանը արագ քայլերու չձեռնարկէ, ապա անոնց կեանքը պիտի ըլլայ վտանգուած», Յեղապաշտական խտրականության վերացման կոմիտեի վարոյթի ծիրին մէջ Ատրպեյճանի դեմ Հայաստանի ներկայացուցած հայցի լուսմներու ընթացքի ըսաւ Լորընս Մարթինը:

Փաստաբանը յիշեցուց, որ տասնեակ հազարաւոր հայեր հարկադրաբար տեղահանուեցան այն տարածքներէն, որոնք Ատրպեյճանը նուաճեց 2020 թուականի 44-օրեայ պատերազմի ընթացքին:

«ՄԷկ հոգի անգամ չէ կարողացած իր տուն վերադառնալ, եւ պատերազմը ւարտեցաւ, երբ Ռուսիոյ Դաշնութիւնը խաղաղապահներ ուղարկեց տարածաշրջան: Նոյնիսկ այդ պարագային Ատրպեյճանը իրմէ կախուած ամէն ինչ ըրած է, որպէսզի այնտեղ մնացող հայերուն կեանքը դարձնէ անտանելի՝ յարձակած է հայկական զինուորու վրայ՝ խախտելով զինադադարի պայմանագիրը, հարկադրաբար տեղահանած է բնակիչները, այդ շարքին՝

բոլոր հայերը Փարոլի, Բերձոր, Աղաւնօ եւ Սուս գիւղերէն, ահաբեկած եւ սպաննած է հայերը, որոնք պատահաբար իրենց առօրեայ գործերով կը զբաղէին եւ կ'անցնէին Ատրպեյճանի զինուած ուժերուն մօտակայքով: Պարբերաբար եւ շարունակաբար կ'ընդհատուի կազմի մատակարարումը, բջջային կապը եւ համացանցը: Ատրպեյճանը միշտ չէ թաքցուցած իր նպատակը: 22 Մայիսին վերթաններու համար Պաքուի մէջ լոր բնակարանային համալիրի բացման արարողութեան ժամանակ Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիեւ ըսաւ. «Մեր հիմնական պարտքն էր վտարել հայերը մեր հողերէն»: Սա այն մարդն է, որ կը սիրէ հայերը անուանել շուներ, վայրենիներ, բարբարոսներ», ըսաւ Մարթին:

Փաստաբանին խօսքով՝ Արցախի շրջափակումը սկսել է երկու օր անց Լեռնային Ղարաբաղի մէջ իշխանութիւնները պատասխանեցին ցուցարարներու պահանջներուն՝ ըսելով, որ միջազգային դիտորդներուն թոյլ պիտի տրուի դիտարկել այն երկու հանքերը, որոնց, իբր, կը վերաբերին բողոքի ցոյցերը, սակայն ցուցարարները նորանոր պահանջներ կը ներկայացնէին, որոնք չէին վերաբերիր բնապահպանական խնդիրներուն:

«Լեռնային Ղարաբաղի իշխանութիւնները ընդունեցին որոշում, որով թոյլ տուին Ռուսիոյ եւ Ատրպեյճանի դիտորդները մուտք գործել, Ատրպեյճանը չընդունեց այդ, եւ երկու շաբաթ անց իշխանութիւնները ընդհանրապէս դադարեցուցին այդ երկու հանքերուն գործունեութիւնը: Շրջափակումը, սակայն, կը շարունակուի եւ չ'աւարտիր: Ատրպեյճանցիները բնապահպանական շատ ւաւելի ծանր խնդիրներ ունին իրենց իսկ տուններուն մօտ, որոնց մասին հարկ է մտածել: Օրինակ՝ քարիւղի եւ կազի արդիւնաւտումը, շահագործումը, որոնք աղէտալի բնապահպանական հետեւանքներու կը յանգեցնեն, այդ շարքին՝ Կասպից ծովին մէջ: Բայց չես գիտեր ինչու Գորիս-Ստեփանակերտ ճանապարհը միակ տեղն է, ուր այսպէս կոչուած բնապահպանները բողոքի ցոյց որոշած են ընել: Աւելին, շրջափակման մեկնարկէն կարճ ժամանակ անց ցուցարարները սկսան նորանոր պահանջներ ւաւելցնել, որոնք որեւէ կապ չունեն իրենց այսպէս կոչուած բնապահպանական պահանջներուն հետ եւ ակնյայտօրէն ւաւելի շատ տարածքային ինքնիշխանութեան հետ կապուած էին: Իրականութեան մէջ այստեղ ի՞նչ տեղի կ'ունենայ: Ակընյայտ է, որ Ատրպեյճանը կը փորձէ հասնիլ անոր, ինչ որ Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիեւը անուանած է իր հիմնական պարտքը՝ վտարել հայերը Լեռնային Ղարաբաղէն», եզրափակեց Մարթին:

ԱՐԱՐԱԴԻ ՉՆՆԴԵԱՆ 120-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ՍՏԵՂԾՈՒԱԾ Ե ԶՈՒԲԵԼԵՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅՑԱՆ Բ.ՓՈՒԼԻ 4-ՐԴ ԳՆԱԳՐՈՒՄ ԱՆ ԱՆՍԱՐ ԶԱՒԱՍԱՐԵՑԱՒ

Շաբաթվերջին շարունակուեցան Լիբանանի ֆուտբոլի ախոյեանութեան Բ.փուլի խախաղերը՝ 4-րդ հանգրուանի մրցումները: Այս հանգրուանին տեղի ունեցաւ գագաթի մրցումը՝ 2-րդ դիրքը գրաւող «Ալ Ահրա»-ի եւ առաջատար «Ալ Անսար»-ի միջեւ, ճունիի «Ֆուադ Եհապ» մարզադաշտին վրայ: Յամառ նպայքարով յատկանշուած մրցումը ավարտեցաւ առանց կոլերու հաւասարութեամբ եւ «Ալ Ահրա» վտանգեց իր 2-րդ դիրքը, որովհետեւ 3-րդ դիրքը գրաւող «Ալ Նըժմէ» կէտերով հաւասարեցաւ անոր հետ: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

Առաջին վեցեակ. - Ալ Ահրա - Ալ Անսար 0-0

Դասաւորում. 1) Ալ Անսար 22 կէտ 35-8, 2) Ալ Ահրա 20 կէտ 27-10, 3) Ալ Նըժմէ 20 կէտ 22-8, 4) Շապապ Ալ Սահէլ 17 կէտ 21-11, 5) Ալ Պըրժ 16 կէտ 20-19, 6) Ալ Շապապ Դազիլէ 6 կէտ 13-24:

ԱՆԳԼԻՅՆ ԲԱԺԱԿԻ 1/16-ՐԴ ԱՄՐՏ. ԼԻՎԵՐՓՈՒԼ ԶՐԱԾԵՑ ՏՈՒՄ

Շաբաթավերջին շարունակուեցան Անգլիոյ ֆուտբոլի բաժակի վերջին 32 խումբերու կամ 4-րդ հանգրուանի մրցումները: Այս հանգրուանի հետաքրքրական մրցումի մը ընթացքին, 6-րդ դիրքը գրաւող «Պրայթըն Էմտ Զով



Ալպիըն»ը իր դաշտին վրայ մրցեցաւ 9-րդ դիրքը գրաւող «Լիվըրփուլ»-ի դէմ ու յաղթանակ տարաւ: Մրցումի 30-րդ վայրկեանին, երիտասարդ կիսապաշտպան Էլիըթ Նաւակեց «Լիվըրփուլ»-ի կողմ, Մոհամմատ Սալահի փոխանցումով: Սակայն, պաշտպան Տանը՝ 39-րդ եւ ճափոնցի կիսապաշտպան Միթոմա՝ 90+2-րդ վայրկեաններուն հաշիւը դարձուցին 2-1 ի նպաստ «Պրայթըն»-ի, դանացի պաշտպան Լեմփիթի եւ երուտորոցի պաշտպան Եսթի-փինիանի փոխանցումով եւ խումբը յաղթանակ տարաւ: Բ. Դասակարգի «Սթըք Սիթի»-ն իր դաշտին վրայ յաղթեց Դ.Դասակարգի «Սթեվըն»-ին, որ նախորդ հանգրուանին յաղթած էր Ա.Դասակարգի «Ասթըն Վիլլա»-ին: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Պրայթըն Էմտ Զով Ալպիըն (Ա.) - Լիվըրփուլ (Ա.) 2-1
- Սթըք Սիթի (Բ.) - Սթեվըն (Դ.) 3-1
- Ռեքսիմ (Ե.) - Շեֆիլտ Եուն. (Բ.) 3-3

ՄՊԱՆԻՅՆ ԱՆՈՅՑԱՆՈՒԹԵԱՆ 19-ՐԴ ԳՆԱԳՐՈՒՄ ՌԵԱԼ ՄԱՏՐԻՏ ԶԱՒԱՍԱՐԵՑԱՒ

Շաբաթավերջին շարունակուեցան Սպանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան երթի վերջին՝ 19-րդ հանգրուանի մրցումները: Այս հանգրուանի հետաքրքրական մրցումի մը ընթացքին, 2-րդ դիրքը գրաւող «Ռեալ Մատրիտ» իր դաշտին վրայ մրցեցաւ 3-րդ դիրքը գրաւող Սան Սեպասթիանի «Ռեալ Սոսիետատ»-ի դէմ ու յամառ պայքարով յատկանշուած մրցումը ավարտեցաւ առանց կոլերու հաւասարութեամբ: Իսկ 4-րդ դիրքը գրաւող «Աթլետիքո Մատրիտ» իր դաշտէն դուրս մրցեցաւ 7-րդ դիրքը գրաւող Փամփլոնայի «Օաստոնա»-ի դէմ ու յաղթանակ տարաւ: Մրցումի 74-րդ վայրկեանին, փոխարինող կիսապաշտպան Սաուլ Նշանակեց մրցումին միակ կոլը, արժանիքիցի կիսապաշտպան Տէ Փոլի փոխանցումէն օգտուելով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Ռեալ Վալատոլիտ - Վալենսիա 1-0
- Օաստոնա - Աթլետիքո Մատրիտ 0-1
- Սելթա Վիլո - Աթլետիք Պիլլաո 1-0
- Ռեալ Մատրիտ - Ռեալ Սոսիետատ 0-0

Դասաւորում. 1) Պարսելոնա 18 մ 47 կէտ 37-6, 2) Ռեալ Մատրիտ 18 մ 42 կէտ 38-16, 3) Ռեալ Սոսիետատ 39 կէտ 28-18, 4) Աթլետիքո Մատրիտ 34 կէտ 28-16:

ԻՏԱԼԻՅՆ ԱՆՈՅՑԱՆՈՒԹԵԱՆ 20-ՐԴ ԳՆԱԳՐՈՒՄ ԱՍ ՄԻԼԱՆ ԵՒ ԵՈՒՎԵՆԹԻՍ ԶԻԶԵՑԱՆ



Իտալիոյ ֆուտբոլի ախոյեանութեան դարձի առաջին՝ 20-րդ հանգրուանի մրցումներու ծիրին մէջ, երրորդ դիրքը գրաւող «ԱՍ Միլան» իր դաշտին վրայ մրցեցաւ 16-րդ դիրքը գրաւող «Սասուոլո»-ի դէմ եւ կրեց իր 4-րդ պարտութիւնը ու նահանջեց 5-րդ դիրք: Իսկ առաջատար «Նափոլի» իր

դաշտին վրայ մրցեցաւ 6-րդ դիրքը գրաւող «Ռոմա»-ի դէմ ու արձանագրեց իր 17-րդ յաղթանակը: Մրցումի 17-րդ վայրկեանին, Նիկեթիացի յարձակող Օսիմիէն յառաջ տարաւ «Նափոլի»-ն, վրացի յարձակող Զվարացիսէլիայի փոխանցումով: 75-րդ վայրկեանին, փոխարինող յարձակող Ալ Շաբաուի հաշիւը դարձուց 1-1, լեւ յարձակող Չալեվսքիի փոխանցումով: Սակայն, 86-րդ վայրկեանին, փոխարինող արժանիքիցի յարձակող Սիմէնէ հաշիւը դարձուց 2-1, լեւ կիսապաշտպան Չիլիսքիի փոխանցումէն օգտուելով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- ԱՍ Միլան - Սասուոլո 2-5
- Եուվենթիս - Մոնզա 0-2
- Լացիո Ռոմա - Ֆիորենթինա 1-1
- Նափոլի - Ռոմա 2-1

Դասաւորում. 1) Նափոլի 53 կէտ 48-15, 2) Ինթեր Միլան 40 կէտ 40-26, 3) Լացիո 38 կէտ 36-16, 4) Աթալանթա 38 կէտ 39-23, 5) ԱՍ Միլան 38 կէտ 37-29:

ԳԵՐՄԱՆԻՅՆ ԱՆՈՅՑԱՆՈՒԹԵԱՆ 18-ՐԴ ԳՆԱԳՐՈՒՄ ՊՈՐՈՒՍԻԱ ԶԱՐԺԱԿԱՆ

Շաբաթավերջին շարունակուեցան Գերմանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան դարձի առաջին՝ 18-րդ հանգրուանի մրցումները: Այս հանգրուանին, Զայաստանի հաւաքականի յարձակող Սարգիս Ադամեանի մաս կազմած 11-րդ դիրքը գրաւող «Բեյլըն»ը իր դաշտէն դուրս հաւասարեցաւ 18-րդ դիրքը գրաւող «Շալքե04»-ի հետ: Ադամեան դաշտ մտաւ 60-րդ վայրկեանին: Իսկ 6-րդ դիրքը գրաւող «Պորուսիա Տորթմունտ» իր դաշտէն դուրս մրցեցաւ 9-րդ դիրքը գրաւող «Պայեր Լեվերքուզըն»-ի դէմ, յաղթանակ տարաւ ու բարձրացաւ 4-րդ դիրք: Յարձակող Անտյէմի՝ 33-րդ եւ «Պայեր»-ի պուրքինա ֆատցի պաշտպան Թափոսպա սիւլմամբ՝ 53-րդ վայրկեաններուն նշանակեցին «Պորուսիա»-ի կոլերը, կիսապաշտպան Պրանտթի փոխանցումով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Շալքե04 - ՖՍ Բեյլըն 0-0
- Պայեր Լեվերքուզըն - Պորուսիա Տորթմունտ 0-2

Դասաւորում. 1) Պայեր Մ. 37 կէտ 52-16, 2) Ինիոս Պերլին 36 կէտ 31-22, 3) Լայպցիկ 35 կէտ 39-24, 4) Պորուսիա Տորթմունտ 34 կէտ 33-25, 12) Բեյլըն 22 կէտ 29-31:

ՓՈՐՊՈՒԿԱԼԻ ԱՆՈՅՑԱՆՈՒԹԵԱՆ 20-ՐԴ ԳՆԱԳՐՈՒՄ ՊԵՆՖԻՍԱ ԶԱՐԺԵՑ

Փորթուգալի ֆուտբոլի ախոյեանութեան 20-րդ հանգրուանի կանուխ խաղցուած մրցումի մը ընթացքին առաջատար «Պենֆիքա» իր դաշտէն դուրս մրցեցաւ 20-րդ դիրքը գրաւող «Փաշուս Ֆերրերա»-ի դէմ ու յաղթանակ տարաւ: Սպանացի պաշտպան Ալեքս Կրիմալտո՝ 7-րդ եւ կիսապաշտպան Ժոսո Մարիո՝ 11-րդ վայրկեաններուն նշանակեցին «Պենֆիքա»-ի կոլերը: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Փաշուս Ֆերրերա - Պենֆիքա 0-2

ԱՅՍՕՐՈՒՄԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐ

- ԱՆԳԼԻՅՆ ԼԻԿԱՅԻ ԲԱԺԱԿԻ ԿԻՍԱՄՐՏ. ԴԱՐՁ**
22:00 Նիւքեմը Եուն. (3) - Սաութհեմփթըն (20)
- ԱՆԳԼԻՅՆ ԲԱԺԱԿԻ 1/16-ՐԴ ԱՄՐՏ.**
21:45 Պիլմիսկեմ Սիթի (Բ.19) - Պլեյքաբըն Ռովըրզ (Բ.5)
- ԻՏԱԼԻՅՆ ԲԱԺԱԿԻ 1/4-ՐԴ ԱՄՐՏ.**
22:00 Ինթեր Միլան (2) - Աթալանթա (4)
- ԳԵՐՄԱՆԻՅՆ ԲԱԺԱԿԻ 1/8-ՐԴ ԱՄՐՏ.**
19:00 Փատերպորն (Բ.) - Շթոլթկարթ (Ա.)
21:45 Ինիոն Պերլին (2) - Վուլֆսպուրկ (7)
- ՓՈՐՊՈՒԿԱԼԻ ԱՆՈՅՑԱՆՈՒԹԵԱՆ 18-ՐԴ ԳՆԱԳՐ.**
21:00 Փաշուս Ֆերրերա (18) - Ժիլ Վիսենթե (15)
23:15 Արուբա (6) - Պենֆիքա (1)
- ՊԱՅԵԹՊՈՒԼԻ ԵՆ ՊԻ.ԷՅ.Ի ԱՆՈՅՑԱՆՈՒԹԻՆ**
02:30 Նիւ Եորք Նիքս (7) - ԼԱ Լեյքըրզ (13)
05:00 Տենվըր Նակեց (1) - Նիւ Օրլէանզ Փելիքընզ (8)
- ՊԱՅԵԹՊՈՒԼԻ ԵՈՒՐՈՒԼԻԿԻ 22-ՐԴ ԳՆԱԳՐՈՒՄ**
19:45 Ֆեներպահչէ (3) - Օլիմպիկոս Փիրէոս (1)
20:00 Արմանի Միլան (18) - Պասընիա Վիթորիա (6)
21:30 Պարսելոնա (4) - Մաքապի ՌՄ (8)
22:00 Վիթիս Պոլոնիա (14) - Յրվենա Չվեգուա (12)
- ՊԱՅԵԹՊՈՒԼԻ ՏՈՒՊԱՅԻ ՄՐՅԱԾԱՐԵԻ 3-ՐԴ ԳՆԱԳՐ.**
15:00 Պելլոնք Զլապ (4) - Սալլա (3)
17:00 Արաբ.Միաց.Էմիր. (5) - Ալ Նասըր (3)
19:00 Ալ Ռիատի (2) - Ալ Աֆրիքի (1)
- ԶԵՅԵՆԱՐԵԱՒ**
10:55 Սեուտական Արաբիոյ շրջափազք, «eurosport»-էն

ՊԱՅԵԹՊՈՒԼ ՏՈՒՊԱՅԻ ՄՐՅԱԾԱՐԵԻ 3-ՐԴ ԳՆԱԳՐՈՒՄ ՏԻՆԱՍՕ ՊԵՅՐՈՒԹ՝ ԱՌԱՋՍԱՐ

Շաբաթավերջին շարունակուեցան Արաբական Միացեալ Էմիրութեան Տուկայ քաղաքի պասքեթբոլի ալումբներու միջազգային մրցաշարի մրցումները, 10 ալումբներու մասնակցութեամբ, բաժնուած երկու խմբակի: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.


Ա.խմբակ.
- Տինամո Պելլոնք (Լիբ.) - Արաբ.Միաց.Էմիր. (ԱՄԵ) 103-68

Դասաւորում. 1) Տինամո Պելլոնք 2 յաղթ - 0 պարտ / կէտերու տարբ. +55, 2) Սթրոնկ Կրուփ 2-0 / +21, 3) Ալ Նասըր 1-1 / -3, 4) Ալ Ուահտա 0-2 / -34, 5) Արաբ.Միաց. Էմիր. 0-2 / -39

Բ.խմբակ. - Սալլա (Մար.) - Ռիատի Պելլոնք (Լիբ.) 78-81
- Ալ Աֆրիքի (Յուն.) - Պելլոնք Զլապ (Լիբ.) 74-71

Դասաւորում. 1) Ալ Աֆրիքի 2 յաղթ - 0 պարտ / կէտերու տարբ. +25, 2) Ալ Ռիատի 1-0 / +3, 3) Սալլա 0-2 / -25, 4) Պելլոնք 0-1 / -3, 5) Ալ Նաֆթ 0-0 / 0:

ԱՐԱՍ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 120-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ՍՏԵՂԾՈՒԱԾ Ե ԶՈՒԲԵԼԵՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ



Զայ մեծանուն երաժշտահան, խմբավար, ԽՍՀՄ ժողովրդական արուեստագետ Արամ Խաչատրեանի ծննդեան 120-ամեակը 2023 թուականին նշելու նպատակով ՀՀ կարգապետ Նիկոլ Փաշինեանի որոշմամբ ստեղծուած է յոբելեանական յանձնաժողով եւ հաստատուած է անհատական կազմ:

Վարչապետը նաեւ յանձնարարած է մեկամսեայ ժամկետի մէջ մշակել յոբելեանական միջոցառումներուն ծրագիրը՝ ծախսերուն նախահաշիւը համաձայնեցնելով ՀՀ-յաստանի Հանրապետութեան Ելեմուտցի նախարարութեան հետ:

ԱԿ-Ն ԵՐԿԱՐԱԶԳԱԾ Է ԲՈՎԻՏԻ ՊԱՏՃԱՌՈՎ, ՀԱՄԱՆԵՆԱՐ-ՀԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱԿՈՒԹԵԱՆ ՈՒՈՐՏԻՆ ՄԷՋ...

(Շարունակուած Գ. Էջէն)

Անոնց կարծիքով, պատուաստումներու եւ անցեալին Բովիտով հիւանդանալու շնորհիւ աշխարհի բնակչութեան կողմէ դիմարողականութեան մակարդակի բարձրացումը «կրնայ սահմանափակել SARS-CoV-2-ի արդեցութիւնը հիւանդացութեան եւ մահացութեան վրայ»:

Ինչպէս կը կարծեն փորձագետները, թէ «մարդոց եւ կենդանիներուն մօտ այս ժահրի վերացումը շատ քիչ հաւանական է», սակայն հիւանդացութեան եւ մահացութեան վրայ անոր ազդեցութեան մեղմացումը «հասանելի է եւ պետք է ըլլայ առաջնահերթ նպատակ»:

Այս առնչութեամբ յանձնաժողովը ԱԿ-ին յանձնարարած է «մշակել արտակարգ իրադրութեան ավարտէն յետոյ Բովիտի դէմ պայքարի այլընտրանքային մեխանիզմներու առաջարկներ»:



ARARAD DAILY NEWSPAPER
MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN
Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael Beirut | Lebanon | www.araraddaily.com email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمنية | المحبرة المسؤولة: أني صرافيان
تصدر عن شركة ماسيسر للمباعة والنشر (ش.م.م.)